ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

ՎԱՐԴԱՆՅԱՆ Ն. Վ.

Քաղաքական կողմնորոշումների ուսումնասիրությունը արդիական հիմնախնդիր և միջոց է քաղաքականության նկատմամբ մարդկանց, նրրանց փոքր և մեծ խմբերի վերաբերմունքը պարզելու և գնահատելու համար: Դա հնարավորություն է տալիս ոչ միայն պարզելու պետությունների որդեգրած քաղաքականության նկարագիրը, այլ նաև բացահայտելու, թե ինչքանով է այդ քաղաքականությունն ընդունվում հասարակության և առանձին անհատների կողմից: Քաղաքական կողմնորոշման ուսումնասիրությունը նպատակ ունի բացահայտելու հանրության տարբեր խմբերի պատկերացումների, գնահատականների կառուցվածքը քաղաքական դաշտի վերաբերյալ, ինչի շնորհիվ բացահայտվում են տվյալ հանրության քաղաքական նախապատվությունները:Քաղաքական կողմնորոշումների ուսումնասիրությունը նաև կարևոր նշանակություն ունի քաղաքական մասնակցության հետ կապված հարցերի պարզաբանման առումով: Սրա շնորհիվ հնարավոր է դառնում կանխատեսումներ անելը թե տարբեր տիպի ընտրությունների արդյունքների և թե ընդհանրապես քաղաքական անցուդարձի վերաբերյալ: Հասարակության քաղաքական կողմնորոշումների մասին պատկերացում ունենալը անհրաժեշտ է յուրաքանչյուր կառավարության համար՝ իր գործողություններն առավել նպատակային կառուցելու և կատարելու համար:

Քաղաքական կողմնորոշումների համակարգը միկրոքաղաքական ուսումնասիրության օբյեկտն է: Քաղաքագիտության ուսումնասիրության օբյեկտները, այսինքն՝ հետազոտության մեջ ներառված երևույթները, կարող են բաժանվել երկու մեծ խմբի: Առաջին խմբում նյութական բնույթ ունեցող օբյեկտներն են, երկրորդում՝ մտային կամ իմացական բընույթ ունեցողները: Այս խմբերից յուրաքանչյուրն ունի որոշակի առանձնահատկություններ և իրեն բնորոշ կառուցվածքային տարրեր[1]: Քաղաքական կողմնորոշումը պատկանում է երկրորդ խմբի օբյեկտների շարքին, այսինքն՝ մտային օբյեկտ է: Դրա ուսումնասիրության առաջին քայլը պետք է լինի օպերացիոնալ սահմանումը: Օպերացիոնալ սահմանումը հասկացության կառուցվածքային տարրերի առանձնացումն է: Քաղաքական կողմնորոշումը հասարակական-քաղաքական արժեքների նկատմամբ անձի, սոցիալական խմբերի, կուսակցությունների, կառավարության և այլ միավորումների ընտրողական վերաբերմունքն է, որը ձևավորվում է նրանց քաղաքական սոցիալականացման ընթացքում: Այն որոշակի կայուն պատկերացումների և դիրքորոշումների ամբողջություն է, որն անմիջականորեն պայմանավորված է նրանց քաղաքական կարգա-

[1] Տե՛ս **Թումանյան Վ. Ս.,** Քաղաքագիտության օբյեկտը և առարկան: Քաղաքագիտություն, Բուհական գիտամեթոդական նյութերի ժողովածու, Ե., 2007 էջ 14-17:

վիճակով և նպատակներով: Քաղաքական կողմնորոշումն փոխկապակցված *ճանաչողական, զգացմունքային* և *գործարարական* կողմնորոշումների ամբողջություն է, որի միջոցով անհատը ձևավորում է կարծիք քաղաքական այս կամ այն երևույթի կամ իրավիճակի վերաբերյալ: Եթե ճանաչողական կողմնորոշումները անհատի ընդհանուր պատկերացումներն են քաղաքական կյանքի, քաղաքական գործընթացների վերաբերյալ, ապա զգացմունքային կողմնորոշումները դիտարկվում են որպես կոնկրետ քաղաքական երևույթի (ինչպիսիք են, օրինակ, ընտրությունների, կուսակցության կողմից վարվող քաղաքականության կամ կոնկրետ քաղաքական գործչի կողմից իրականացվող քայլերի) նկատմամբ անհատի մեջ ձևավորված զգացմունքներ ու ապրումներ: Գործարարական կողմնորոշումները նախորդ երկուսի համադրությունն են, այլ կերպ ասած՝ անհատի դատողություններն են քաղաքականության վերաբերյալ[2]: Սրանք դատողություններ են երկրի ներքին և արտաքին քաղաքական վիճակի, կուսակցական դաշտի, տարբեր քաղաքական գործիչների և ընդհանրապես քաղաքական անցուդարձի վերաբերյալ: Տարբեր հետազոտողների ուշադրության կենտրոնում կարող են գտնվել այս կողմնորոշումներից յուրաքանչյուրը կամ բոլոր երեքի համադրությունը: Ըստ ուսումնասիրության առարկայի՝ առանձնացվում են տարբեր խնդիրներ, որոնց պետք է պատասխաններ տրվեն:

Քաղաքական կողմնորոշումները դիտարկվում են նաև որպես մարդկանց պատկերացումներ այն մասին, թե ինչպիսին պետք է լինեն քաղաքական գործիչների քաղաքական նպատակները, որ բավարարեն հասարակության անդամների պահանջմունքները, և ինչպե՞ս, ի՞նչ միջոցներով պետք է այդ նպատակները իրականացվեն: Ըստ այս մոտեցման կողմնակիցների՝ քաղաքական կողմնորոշումը անհատի քաղաքական գործընթացներում ընդգրկվածության արդյունքն է[3]: Այստեղից կարելի է եզրակացնել, որ եթե անհատը ներգրավված չէ հասարակության քաղաքական կյանքում, չի հետաքրքրվում քաղաքականությամբ, չի մասնակցում ընտրություններին, ապա նա չունի քաղաքական կողմնորոշում: Սակայն այս կարծիքին կարելի է չհամաձայնվել: Անհատի՝ քաղաքականությամբ չզբաղվելը և չհետաքրքրվելը պայմանավորված են որոշակի քաղաքական կողմնորոշումով: Դա կարող է բազմաթիվ պատճառներ ունենալ, օրինակ, իր կարծիքի արժեքավորության թերագնահատումը կամ անարդարության գերակայության ըմբռնումը և այլն:

Հեղինակներն առանձնացնում են քաղաքական կողմնորոշման երեք մակարդակ՝ առօրեական, մասնագիտական և գիտական:

Առօրեական կողմնորոշումը հատուկ է հասարակության հիմնական հատվածին և ձևավորվում է ամենօրյա շփումների ընթացքում: Դրա վրա մեծ է տարբեր զանգվածային լրատվամիջոցների և շփման առաջնային խմբերի ազդեցությունը: Նրան բնորոշ է զգացմունքայնությունը,իմ-

---

[2] Տե՛ս Мусиенко Т. В., *Система политических ориентаций личности как объект микрополитики (Credo New, 2003, N 3, с. 56).*

[3] *Տե՛ս* Гавра Д. П., Соколов Н. В., *Исследование политической ориентации (Социс, 1999 N 1, с. 67).*

պուլսիվությունը,ճկունությունը քաղաքական փոփոխությունների նըկատմամբ և փոփոխությունը՝ դրանց համեմատ: Այն հակասական է, համակարգային բնույթ չի կրում և չի հենվում որոշակի սկզբունքների վրա, ուստի հեշտ է ազդեցության տակ ընկնում և հեշտ է կառավարվում:

Մասնագիտական կողմնորոշումը հատուկ է քաղաքականությամբ զբաղվողներին: Այն համակարգված է քաղաքականության, քաղաքական ռեժիմների, կառավարման և նմանատիպ այլ գիտելիքների շնորհիվ: Սրա հիմքում ընկած են գիտելիքը և դրանից բխող քաղաքական շահը, այդ իսկ պատճառով մասնագիտական կողմնորոշումը ավելի կայուն բնույթ է կրում, քան առօրեականը: Մասնագիտական կողմնորոշման հիմքում ընկած են կայուն քաղաքական դիրքորոշումներ:

Գիտական կողմնորոշումը հատուկ է քաղաքականությունը հետազոտողներին, որոնք ուսումնասիրում են հասարակության քաղաքական կյանքի տարբեր կողմերը: Ի տարբերություն առօրեականի՝ այն ձևավորվում է քաղաքական կյանքի երկարատև և խոր ուսումնասիրությունների շնորհիվ, ինչի հետևանքով էլ հիմնականում փոփոխությունների չի ենթարկվում:

Եթե մեզ հետաքրքրում է քաղաքական կողմնորոշման առօրեական մակարդակը, մենք կարող ենք օգտագործել սոցիոլոգիական հարցման մեթոդը, մասնավորապես՝ անցկացնել զանգվածային հարցումներ բնակչության մեջ: Այստեղ կարևոր է առանձնացնել, թե քաղաքական կողմնորոշման որ տեսանկյունն է մեզ հետաքրքրում, քանի որ շատ դժվար, եթե ոչ անհնար է հարցաթերթի միջոցով ստանալ հասարակության քաղաքական կողմնորոշումների ամբողջական, հավաստի և խոր պատկերը: Մասնագիտական և գիտական մակարդակներում ուսումնասիրություններ անելիս չենք կարող առաջնորդվել հարցաթերթով: Այստեղ կիրառվում են հետազոտության որակական և խոր մեթոդներ՝ խորին հարցազրույց, փորձագիտական հարցում կամ ֆոկուս խմբի կիրառման մեթոդ:

Նաև առանձնացնում են քաղաքական կողմնորոշման տարբեր տիպեր՝ ըստ սուբյեկտների.

- անհատական, որը հատուկ է որոշակի անձանց: Այն կառուցվում է նրա ողջ կյանքի և քաղաքական սոցիալականացման ընթացքում և ներառում է անհատի պատկերացումները քաղաքականության մասին ընդհանրապես.

- խմբային: Առաջին հայացքից թվում է, որ սա անհատական քաղաքական կողմնորոշումների հանրագումար է, սակայն սա պարզապես դըրանց գումարին չի կարելի հանգեցնել: Այն հատուկ է որոշակի չափանիշներով իրար նման մարդկանց ամբողջությանը, օրինակ, տարբեր տարիքի, ստրատիֆիկացիոն համակարգում տարբեր տեղեր զբաղեցնող, տարբեր նյութական միջոցներ ունեցող և այլ հատկանիշներով համախմբված մարդկանց: Խմբայինը չպետք է շփոթել զանգվածայինի հետ.

- զանգվածայինը բնորոշ է անկայուն հանրություններին, օրինակ՝ հանրահավաքների, զանազան ցույցերի հավաքված մարդկանց խումբը: Զանգվածային քաղաքական կողմնորոշումը հիմնականում շատ արդիական քաղաքական բովանդակություն է ունենում.

- հասարակական կողմնորոշումը բնորոշ է ողջ հասարակությանը, ավելի ստույգ՝ դրա մեծամասնությանը: Սրա մեջ են մտնում նաև ազգային, պետական քաղաքական կողմնորոշումները[4]:

Անկախ նրանից, թե քաղաքական կողմնորոշման որ տիպն են ուսումնասիրում, առանձնացնում են որոշ ընդհանուր բաղկացուցիչներ, որոնք հատուկ են քաղաքական կողմնորոշման բոլոր ձևերին: Առաջինը կողմնորոշման բովանդակությունն է, այսինքն՝ առարկան, որը կարող է լինել յուրաքանչյուր օբյեկտ, ինչպիսիք են քաղաքական ինստիտուտները, կուսակցությունները կամ էլ տարբեր քաղաքական գործիչներ և այլն: Այսինքն՝ նախքան քաղաքական կողմնորոշման բուն հետազոտման գործընթացին անցնելը, հետազոտողը հստակ պատկերացում պետք է ունենա, թե որն է իր հետազոտության առարկան, ինչ առանձնահատկություններ ունի այն: Բովանդակության մասին խոսելիս չպետք է մոռանալ տվյալ կողմնորոշման ծագումնաբանական բնույթի, այսինքն՝ նրա ծագման աղբյուրների մասին: Բացահայտելով, թե ինչ հիմքեր ունի քաղաքական կողմնորոշումը, հնարավոր է ավելի հստակ կանխատեսումներ անել նրա կրողների վարքի վերաբերյալ: Թե ինչ գործոններ են ընկած որոշակի քաղաքական կողմնորոշման հիմքում, ըստ այդմ էլ այն կարող է լինել խիստ կայուն կամ հեշտ ենթարկվել փոփոխությունների: Քաղաքական կողմնորոշման հիմքում կարող են ընկած լինել բազմաթիվ գործոններ: Նշենք մի քանիսը՝ ազգային պատկանելության զգացումը, ազգային գաղափարախոսությունը, խմբային շահը և դրա գիտակցումը, անձնական շահը, ԶԼՄ ազդեցությունը, ներքին քաղաքական իրավիճակը, արտաքին քաղաքական իրավիճակը և այլն: Քաղաքական կողմնորոշման կայունությունն էլ իր հերթին կախված է նրանից, թե կողմնորոշման առարկան որքանով է նշանակալի անհատի համար, և նրա տարբեր կողմնորոշումներն ինչպես են հարաբերվում միմյանց. համապատասխանո՞ւմ են, թե՞ էապես տարբերվում են միմյանցից: Հիմնականում այն կողմնորոշումները, որոնց հիմքում ընկած են ազգային պատկանելության գիտակցությունը, ազգային շահի արժեքավորումը, հատկապես հայ հասարակության նման մոնոէթնիկ և այլ էթնիկ խմբեր ունեցող փակ հասարակությունների համար առանձնանում են իրենց հարաբերական կայունությամբ: Իսկ, օրինակ, ԶԼՄ ազդեցության ներքո ձևավորված քաղաքական կողմնորոշումներն ավելի հեշտ են ենթարկվում փոփոխությունների, քանի որ դրանց հիմքում հիմնականում ընկած չեն կայուն քաղաքական դիրքորոշումները:

Այս ամենի ուսումնասիրությունից հետո հաջորդ քայլը քաղաքական կողմնորոշման կոնկրետ բաղադրիչի ընտրությունն է, որի տեսանկյունից էլ իրականացվում է նրա ուսումնասիրությունը: Քաղաքական կողմնորոշման ուսումնասիրությունը ենթադրում է մի շարք երևույթների և գործընթացների քննական վերլուծություն: Ամերիկյան քաղաքագետներ Կ. Ջենինգսը և Ռ. Նյումանը քաղաքական կողմնորոշումը բաժանում են

[4] Տե՛ս *Политология, отв. ред. Перевалов Б. Д., М., 2004 с. 163.*

հետևյալ բաղադրիչների. 1) կողմնորոշում, որն արտահայտում է անհատի վերաբերմունքը քաղաքականության նկատմամբ, 2) կողմնորոշում, որն արտահայտում է անհատի քաղաքական ներուժն ու ռեսուրսները՝ որպես քաղաքականության սուբյեկտ, 3) կողմնորոշում, որը բնութագրում է անհատի վերաբերմունքը կուսակցությունների մասնակցային և ընտրական գործընթացներին, 4) կողմնորոշում, որը բնութագրում է անհատի վերաբերմունքը հասարակական-քաղաքական հարցերի նկատմամբ, 5) կողմ-նորոշում, որը բնութագրում է անհատի գնահատականները կառավարության և սոցիալ-քաղաքական խմբերի նկատմամբ, 6) ոչ քաղաքական կողմնորոշում:

Այս կողմնորոշումներից յուրաքանչյուրի ուսումնասիրության համար անհրաժեշտ է առանձնացնել որոշակի չափորոշիչներ:

Անհատի վերաբերմունքը քաղաքականության նկատմամբ ուսումնասիրելու համար պետք է նախ և առաջ հաշվարկել այն ժամանակի ծավալը, որը հատկացվում է հասարակական-քաղաքական հարցերին ծանոթանալու համար, և պարզել, թե ինչքանով է անհատը հետաքրքրված այդ հարցերով: Դրա համար պետք է հաշվարկել, թե որքան ժամանակ է նա հատկացնում տարբեր լրատվամիջոցներից քաղաքականության վերաբերյալ տեղեկատվության ստացմանը և որքան ժամանակ՝ այդ տեղեկատվության քննարկմանը իր նեղ շրջապատում: Այնուհետև անհրաժեշտ է հետազոտել ԶԼՄ-ներով և ԶԼՄ-ներից օգտվելու հաճախականությունը: Քաղաքականության նկատմամբ վերաբերմունքի ուսումնասիրության համար հարկավոր է նաև հետազոտել, թե քաղաքականության որ ոլորտներով են առավել հետաքրքրված մարդիկ, և ինչով է դա պայմանավորված: Այս ամենը կարելի է բացահայտել հետևյալ հարցերով. «Հետաքրքրվո՞ւմ եք արդյոք քաղաքականությամբ կամ հետևո՞ւմ եք արդյոք երկրում տեղի ունեցող քաղաքական իրադարձություններին», «Ի՞նչ միջոցներից եք հիմնականում տեղեկանում քաղաքականությանը վերաբերող հարցերին», «Ո՞ր լրատվամիջոցներից եք առավել հաճախ օգտվում քաղաքականության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար», «Որքանո՞վ եք վստահում ԶԼՄ-ների միջոցով ստացված տեղեկատվության հավաստիությանը», «Ինչքա՞ն հաճախ եք քննարկում քաղաքական թեմաներ Ձեր ընկերների, հարազատների հետ շփման ժամանակ» և այլն:

Անհատի քաղաքական ներուժն ու ռեսուրսներն արտահայտող քաղաքական կողմնորոշումներն ուսումնասիրելու համար անհրաժեշտ է առանձնացնել հետևյալ չափորոշիչները.

1) քաղաքական իրազեկությունը՝ որպես վստահություն սեփական կարողությունների նկատմամբ՝ քաղաքական ոլորտի վրա ինչ-որ ազդեցություն ունենալու համար: Այստեղ խոսքը ոչ միայն քաղաքականության վերաբերյալ տեղեկատվություն ունենալու մասին է, այլև սեփական իրավունքների և պարտականությունների գիտակցմանն է վերաբերում.

2) հասարակական կարգի քաղաքական և գաղափարախոսական կառուցվածքի էության ըմբռնում: Այս նշանացույցը ավելի շատ կիրառելի է կուսակցական համակարգերի ուսումնասիրության համար.

3) քաղաքական գիտելիքների ծավալ կամ քաղաքական ոլորտի վերաբերյալ անհատի տեղեկատվության ծավալ: Կախված նրանից, թե քաղա-

քական կյանքի որ հատվածի վերաբերյալ ունեցած տեղեկատվության ծավալն է մեզ հետաքրքրում, օգտագործում ենք «Գիտե՞ք արդյոք…..», «Որքանո՞վ եք տեղյակ….» հարցերը:

Ընտրական գործընթացների և կուսակցությունների նկատմամբ անհատի վերաբերմունքի ուսումնասիրության համար օգտագործվում են կուսակցական պատկանելության կամ քաղաքական անկախության վերաբերյալ հասկացություններ: Կուսակցական պատկանելության ուսումնասիրության ժամանակ քննարկվում են նաև դրա հիմքում ընկած գործոնները: Դրանք կարող են ունենալ գաղափարական կամ շահադիտական հիմքեր կամ կախված լինել կուսակցության գլխին կանգնած անձանց անհատական հատկանիշներից: Այս հիմքերի ուսումնասիրությունը թույլ կտա կանխատեսումներ անել կողմնորոշման կայունության վերաբերյալ և, հետևաբար նաև կանխատեսել նրա կրողների քաղաքական վարքը:

Անհատի սոցիալ-քաղաքական դիրքորոշման ուսումնասիրության ժամանակ չափորոշիչը նրա *կարծիքն է* հասարակական քաղաքականության տարբեր խնդիրների վերաբերյալ: Պետք է հաշվի առնել, որ քաղաքական կողմնորոշման այս ձևը համեմատաբար ոչ կայուն է՝ կապված հենց իր առարկայի հետ:

Երկրի ղեկավարության և տարբեր քաղաքական խմբավորումների նըկատմամբ անհատի վերաբերմունքն արտահայտող կողմնորոշման ուսումնասիրության ժամանակ չափորոշիչ է *«քաղաքական վստահությունը»:* Հետազոտվում է իշխանության տարբեր մակարդակների, ինչպես նաև տարբեր կուսակցությունների և քաղաքական միավորումների նկատմամբ վստահության մակարդակը: Վստահության ուսումնասիրությունն ավելի բարդ է, քանի որ յուրաքանչյուր մարդ այն յուրովի է հասկանում, այդ իսկ պատճառով առավել ամբողջական և հստակ պատկեր ստանալու համար ավելի հարմար է կիրառել որոշ հոմանիշներ: Այստեղ օգտագործվում են հետևյալ հարցերը. «Վստահու՞մ եք արդյոք...», «Ինչքանո՞վ եք վստահում, հավատում....», «Ապահո՞վ եք Ձեզ զգում…» և իրավիճակային հարցեր:

Այսպիսով, քաղաքական կողմնորոշման հայեցակարգի հիմքում ընկած է կողմնորոշման առարկայի, բովանդակության և ձևավորման վրա ազդող գործոնների ուսումնասիրությունը:

Քաղաքական կողմնորոշումների հետազոտմամբ զբաղվող մասնագետների ուշադրության կենտրոնում հիմնականում գտնվում են՝ ա) անհատի քաղաքական ներուժն ու ռեսուրսներն արտահայտող կողմնորոշումները. բ) կողմնորոշումներ, որոնք արտահայտում են անհատի վերաբերմունքը քաղաքական կուսակցությունների և ընտրությունների նկատմամբ. գ) կողմնորոշումներ, որոնք արտահայտում են անհատի վերաբերմունքը սոցիալ-քաղաքական հարցերի նկատմամբ:

Համապատասխանաբար արդեն առանձնացվում են որոշակի հստակ հարցադրումներ, որոնց պատասխանների հիմքով պարզվում է մարդկանց քաղաքական կողմնորոշումը: Դրանք են՝ 1) անհատի պատրաստակամությունը մասնակցելու հասարակության քաղաքական կյանքին. 2) անհատական քաղաքական ձգտումները՝ ընդգրկվելու տարբեր կուսակցությունների մեջ. 3) քաղաքական գիտելիքը՝ որպես քաղաքականության վերաբերյալ անհատի ստացած

տեղեկատվության ծավալ. 4) կուսակցական պատկանելությունը. 5) անհատի կարծիքը տարբեր քաղաքական հարցերի շուրջ:

Այս բոլոր հարցերին կարելի է պատասխանել հասարակական կարծիքի ուսումնասիրության միջոցով՝ օգտագործելով սոցիոլոգիական հետազոտական տարբեր մեթոդներ: Կախված հետազոտության նպատակներից՝ կարելի է կազմակերպել սոցիոլոգիական հարցումներ՝ հարցաթերթում ներառելով մեզ հետաքրքրող հարցերը՝ սկսած նրանից, թե ինչքան ժամանակ է հատկացնում հարցվողը քաղաքականության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար մինչև նրա դիրքորոշումները տարբեր քաղաքական իրավիճակների վերաբերյալ: Նման հետազոտություններն ավելի են կարևորվում նախընտրական գործընթացների ժամանակաշրջանում, քանի որ հասարակության քաղաքական կողմնորոշումների ուսումնասիրությունը այս ժամանակահատվածում թույլ է տալիս որոշակի կանխատեսումներ անել ընտրությունների արդյունքների վերաբերյալ: Հարցումների շնորհիվ թեկնածուներն առավել արդյունավետ են կազմակերպում իրենց գործողությունները՝ լսարանի առավել դրական արձագանքին արժանանալու համար: Այս ժամանակահատվածում առավել շատ կարևորվում են հասարակության անդամների կարծիքները տարբեր թեկնածուների նկատմամբ. ինչո՞վ է պայմանավորված նրանց դրական կամ բացասական վերաբերմունքը այս կամ այն թեկնածուի նկատմամբ, ո՞ր դեպքում կամ ի՞նչ փոփոխությունների հետևանքով նրանց կարծիքը կարող է փոխվել:

Հասարակության քաղաքական կողմնորոշումների ուսումնասիրությունն արդիական է բոլոր ժամանակներում, քանի որ հասարակության քաղաքական հայացքների և նախասիրությունների վերաբերյալ հավաստի տեղեկատվության առկայությունը կարող է օգնել քաղաքականություն իրականացնողներին առավել արդյունավետ կազմակերպելու իրենց գործողությունները: Սա թույլ կտա մշակել հենց տվյալ հասարակությանը առավել ներդաշնակ քաղաքականություն, որն ավելի ընդունելի կլինի տվյալ հասարակության անդամների կողմից, ինչն էլ իր հերթին կնպաստի երկրի ներքին քաղաքական կայունությանը:

КРИТЕРИИ ИССЛЕДОВАНИЯ ПОЛИТИЧЕСКОЙ ОРИЕНТАЦИИ

ВАРДАНЯН Н. В.

Резюме

Политическая ориентация людей, их больших и маленьких групп, оказывает большое влияние на политическое поведение человека.

Концепция политической ориентации используется в микрополитике для обозначения совокупности индивидуальных политических ориентаций в отношении тех или иных вопросов политики.

Первым шагом в исследовании политической ориентации является операционализация этой категории. Политическая ориентация личности представляется как сеть взаимосвязанных когнитивных, аффективных и эвалюативных ориентаций, выступающих в качестве элементов системы и выполняющих функцию формирования индивидуального мнения о том или ином предмете политики. Когнитивные ориентации трактуются как знание личности о мире политики. Аффективные ориентации рассматриваются в качестве чувств и эмоций, возникающих у человека по отношению к тем или иным политическим феноменам. Эвалюативные ориентации определяются как результат синтеза когнитивных и аффективных ориентаций, каковым и предстает суждение личности о предмете. Все эти виды политических ориентаций изучаются с помощью разных социологических методов исследования.